

ևս աւելորդ համարեցինք լիշեալ նամակի լուսատիպը
հրատարակել էլումարի մէջ:

Այստեղ մեզ հետաքրքրովը այն չէ, թէ ցանցառ
և թեթևամիտո՞ Գրիգոր թէ Սենեքերիմ Արծրունուն է
համարում Ստեփաննոո Նազարեանցը, ալլ այն, որ մենք
երկու գէպքումն էլ յանցաւոր գուրս եկանք, թէ ինչ-
պէս վստահացանք հրատարակութեան տալ հայոց
կուռքերից մէկին վերաբերեալ մի գրուածք և մինչեւ
ալժմ էլ կրում ենք մեզ վերալ այդ ծանր յանցանքի
արժանի պատիմը՝ ամենօրեալ հայհոլանքներ «Մշակ»
մէջ:

ԳՐԻՑ Ա. ՔԱՀ. ԱՂԱՇԽԱՇ

+ ԱՐՃԱԿ ՏԵՐ ՄԻՒՔԵԼԵՄՆՑ

Տարւոյս Յունիս ամսի 25-ին Շուշում երկարատև
հիւանդութիւնից յետու վախճանուեցաւ Արշակ Տէր Մի-
քելեանը երիտասարդ հասակում: Հանգուցեալը՝ պատ-
կանում էր այն կարգի անձանց, որոնք գլխովին նույիր-
ւում են իրենց լնտրած ասպարէզին և հարազատ մնում
իրենց կոչման, չնայելով որ շրջապատն ու մարդիկ մի-
միայն յուսաբեկ են անում մարդուս: Հանգուցեալի
կեանքը ամբողջովին կռիւ է եղած. ում հետ է եղել
այդ կռիւը և ինչպէս է ելել նա այդ կռուից, կիս-
սենք այն ժամանակ, երբ առիթ կռւնենանք գրել նո-
րա երկասիրութիւնների մասին:

Հանգուցեալը բնիկ Շուշեցի էր. ծնուած 1864
փետրուարի 1-ին: Մանկութեան հասակում, ինչպէս
ինքն էր ասում, սկզբնական դաստիարակութիւնն ստա-
ցել է իր մօրից, սովորելով նրանից հայոց լեզու, գրա-
բառ և ալն. 1881 թ. տւարտել է Շուշուալ քտղա-
քային ուսումնարանը, ապա 1883 թ. գնում է ս. էջ-

միաձին Հոգեւոր ճեմարանում շարունակելու ուսումը՝ 1888 թ. վերջացնում է ճեմարանի լիակատար դասընթացքը։ Նշանաւոր զբջան էին կազմում 87 և 88 թուականները ճեմարանի համար։ Այդ ժամանակներում կրօնական առարկաների ուսուցիչ էր Պոլսի այժմեան պատրիարք գիտնական Մաղաքիա սրբազնը, որ մի նոր ոգի մացրեց Մալր Աթոռի ճեմարանի սաների մէջ ներշնչելով նոյս սէր դէպի աստուածաբանական գիտութիւնները, հայրենի եկեղեցին և նորա նուիրապետութիւնը, որին ծառայելու ուխտն են անում մեր այժմեան երիտասարդ հոգեւորականներից շատերը, որոնք այն ժամանակ դեռ ևս ուսանողական նստարանի վերայ էին։ Արշակ Տէր Միքելեանը մինը լինելով Օրմանեան սրբազնի աշակերտներից, գիմում է արտաստհման աստուածաբանական գիտութիւնների մէջ կատարելագործուելու և 1892 թ. աւարտում է Ենալի համալսարանը ստանալով փիլիսոփական գոկտօրի աստիճան, որի համար առաջուց ներկայացրել էր «Հայաստանեաց եկեղեցին և Բիւզանդական ժողովով պարագալք» լուրջ աշխատութիւնը, որ լետով հայերէնի վերածելով, ներկայացնում է Սահակ-Մեսրոպեան մըցանակաբաշխութեան ու արժանանում մըցանակի։

1892 թ. ուսուցութեան պաշտօնով հրաւիրում է ճեմարան Արևստակէս եպիսկոպոսի տեսչութեան օրօք։ 94 թ. Վեհափառ կաթողիկոսի լատուկ պատուէրով գնում է Շուշի թեմական դպրանոցում ուսուցիչ լինելու, սոյն պաշտօնի մէջ մնում է 1900 թ.։ Անցեալ տարի նոյեմբեր ամսից սկսած նա այլ ևս կանոնաւոր չի կարողանում լաճախել դասերին։ Հիւանդութիւնը օրէցօր հիւծում է նրան և ի վերջոյ լունիսի 25-ին վերջ դնում նորա արդիւնաւոր կեանքին։

Ա. Տէր Միքելեանը եռանդուն աշխատակիցներից

մէկն էր «Նոր-Դար» լրագրի և վերջերս նաև «Լումալ» հանդիսի: Նորա բազմահմուտ գրիչը ուղղուած էր լատ-կապէս Վենետիկի Մխիթարեանց պապական հոգւով խեղաթիւրուած հայ գրականութեան դէմ:

Հանգուցեալի գրական երկերի մասին մենք կխօ-սենք առաջիկալ համարում: Յաւիտենական հանգիստ մեղուաջան գրական գործչի ոսկըներին:

ԳՍՄԱՆԻ ՔԸԹԻՊԱՑԻ ԱՐՑԱՆԲ

Պ. Գրիգոր Զալխուշեանը գովելի ջանասիրութեամբ քանի տարիներից ի վեր հանգանակում էր մի գումար մեր անզուգական բանաստեղծ հանգուցեալ Ռափայէլ Պատկանեանցի շիրմի վերալ պատշաճաւոր մի արձան կանգնելու նպատակով: Այդ նուիրատուութեանց հաշիւը հետզհետէ տպագրուում էր հայ պարբերական թերթե-րում: - Այս օրերս մենք ստացանք պ. Զալխուշեանից մի նամակ, որով ծանուցանում էր թէ լիշեալ արձանը պատրաստ է արդէն և հանդիսաւոր բացումը տեղի պի-տի ունենայ ամսուս 23-ին, կիւրակի, 12 ժամին ն. Նա-խիջևանի ս. Խաչ վանքում:

Խմբագրութիւնս պարտք համարեց իւր խնդակցու-թիւնը լալտնել այդ մասին առանձին հեռագրով:

ՍՏԱՑՈՒԱԺ ԳՐՔԵՐ

Ասհակ. Մեսրոպեան մատենադարան Ա. — Գիր. Էղբոց. մատենա-
դրութիւն նախնեաց, Թիֆլիս 1901.
Ա. Էնոքուրով. Դասագիրք ընդհանուր պատմութեան, միջին դար.